ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«7» մայիսի 2026 թվականի N: 162 - Ա ք. Գյումրի

ՍԱՐԳԻՍ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի չափերի հաշվարկման և հատուցման վճարման կարգի» 3-րդ և 7-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N:1550-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության» 20-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական Սարգիս Մեքինյանի 2026 թվականի մայիսի 7-ի զեկուցագիրը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական Սարգիս Մեքինյանին 2026 թվականի մայիսի 8-ին գործուղել քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ձիթհանքովի միջնակարգ դպրոց», «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց», «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» և «Հառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հավակնորդների զարգացման ծրագրերի փորձաքննության ներկայացման և ընտրության համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023

թվականի դեկտեմբերի 14-ի N:1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2026 թվականի մայիսի 8-ին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի՛ հետ ճիշտ է